ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«15» 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0228-23

Ձեռնարկողը՝ ***«ՄԵԳԱ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ***
ք. Երևան, Ազատություն պող.,/24/1 Քանաքեռ-Զեյթուն

Գործունեությունը՝ ***Շողակաթ բնակավայրի տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 110/0,8/0,8կՎ ուժային տրանսֆորմատորներով ենթակայանի և դրա սնման համար 110կՎ օդային գծի կառուցման աշխատանքների կատարման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0228-23

«15» դեկտեմբերի 2023թ.

Շողակաթ բնակավայրի տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 110/0,8/0,8կՎ ուժային տրանսֆորմատորներով ենթակայանի և դրա սնման համար 110կՎ օդային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՄԵԳԱ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, Շողակաթ բնակավայր

Ներածական մաս. «ՄԵԳԱ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերությունը նախատեսում է Գեղարքունիքի մարզի Շողակաթ բնակավայրում իրականացնել արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 110/0,8/0,8ԿՎ ուժային տրանսֆորմատորներով ենթակայանի և դրա սնման համար 110ԿՎ օդային գծի աշխատանքներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-110-Ն) օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի 3)-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Գործունեության տարածքի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:

Նկարագրական մաս. «ՄԵԳԱ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերության արևակայանը կտեղակայվի Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում՝ 9-րդ փողոց, 34 և 35 հողամասերում: Երկու հողամասերն իրարից բաժանվում են մոտ 3մ լայնությամբ գրունտային ճանապարհով: 35 հողամասը զբաղեցնում է 6,5217 հա, 34 հողամասը զբաղեցնում է 5.87096 հա տարածք, ընդամենը՝ 12,39266 հա տարածք:

Նախատեսվում է արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 110/0.8/0.8կՎ 2 հատ տրանսֆորմատորային ենթակայանի և դրա սնման համար 110կՎ օդային գծի կառուցում:

Շողակաթը մարզկենտրոնից գտնվում է 95 կմ, Երևան քաղաքից՝ 110 կմ հեռավորության վրա, տեղակայված է Սևանա լճի կենտրոնական արևելյան հատվածում:

Նախատեսվող «ՄԵԳԱ ԷՆԵՐՋԻ» արևային կայանի նպատակը ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցումն է՝ էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով:

Արևային կայանի տեղաբաշխման վայրն ընտրված է՝ հաշվի առնելով տվյալ տարածքում արևային ճառագայթման տվյալները:

Տարածքը տեղակայված է Սևանա լճի հյուսիս արևելյան մասում՝ Գեղամա լեռների ստորոտում: Տեղակայման աշխարհագրական կոորդինատներն են՝

հյուսիսային լայնության՝ 40°30'57,0°

արևելյան երկարության՝ 45°16'52,7°:

Նախատեսվող գործունեության տարածքը մոտակա բնակավայրերից՝ Շողակաթից գտնվում է 1194,1 մ, իսկ Աղբերքից՝ 863,9 մ հեռավորություններ վրա:

Բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 2091- 2108 մետր:

Տարածաշրջանը բոլոր կողմերից շրջապատված է լեռներով: Տարածքին բնորոշ է թույլ կտրտված ռելիեֆը փոքր թեքություններով:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են կավճի ժամանակաշրջանի դունիտները, պերիդունիտները, կրաքարերը, որոնք ծածկված են էլյուվիալ, դելյուվիալ-պրոլյուվիալ ծագման կավային, խճա-մանրախճային առաջացումներով:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են: Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Գործունեության ենթակա տարածքում գրունտային ջրերը գտնվում են 15-20 մ խորության վրա, տարածքում քաղցրահամ ջրի աղբյուրները բացակայում են, իսկ մոտակա մակերևութային ջրային ռեսուրսը Սևանա լիճն է, որը նախատեսվող գործունեության տարածքից գտնվում է 2114,6 մ հեռավորության վրա:

Գործունեության տարածքին ամենամոտ բնության հատուկ պահպանվող տարածքը «Սևան» ԱՊ-ն է՝ մոտ 2 կմ հեռավորության վրա: 200-250 մ հեռավորության վրա գտնվում է այլ արևակայան:

Գործունեության տարածքը չի առնչվում պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում չկան բնության հուշարձաններ:

Տարածքն անտառածածկ չէ, բացակայում է ծառաթփային բուսականությունը, առկա է խոտածածկ:

ՕԳ-ի հենասյունների տեղակայման վայրերում ևս բացակայում են ծառերը թփերը, ուստի չի լինելու ծառերի հատման անհրաժեշտություն:

Տարածքում գերակշռում են տափաստանային, կարբոնատացված գորշ հողերը, հողաբուսաշերտը տեղ տեղ բացակայում է, տեղ –տեղ հասնում է 25-30 սմ-ի:

Գործունեության ենթակա և հարակից տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված տեսակները բացակայում են՝ պայմանավորված տարածքի արդեն մարդածին ազդեցության գոտում գտնվելու հանգամանքով:

Գործունեության ենթակա տարածք հնարավոր է մոտենալ գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Գնահատման հաշվետվության համաձայն նախատեսվում է՝

1. արևային կայան՝ ՖՎ վահանակների զբաղեցրած մակերեսը կկազմի 4,2 հա: Առավելագույն դրվածքային հզորությունն ըստ փոխակերպիչների՝ 8,2 ՄՎտ: Կայանի համար ընտրվել է Trinasolar ֆիրմայի TSM-DEG19RC.20 մոդելի 565 Վտ հզորությամբ 17810 հատ ֆոտովոլտային երկերես վահանակ և Huawei ֆիրմայի SUN2000-215KTL-H0 մոդելի 200 կՎտ հզորությամբ՝ 42 հատ ներցանցային բազմաահակու փոխակերպիչ: Վահանակները կտեղադրվեն ազիմուտից 180° շեղված և հորիզոնի նկատմամբ 30° անկյունով՝ 52 և 26 տեղանոց հենակառուցվածքային սեղանների վրա, հենակառուցվածքը նախատեսվում է հավաքովի դետալներից՝ ցինկապատ պողպատից:

2. Օդային գիծ, տրանսֆորմատորային ենթակայան՝ ենթակայանի շինությունը կգրաղեցնի 0,060 հա տարածք: Համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի՝ արևային կայանը Հայաստանի էներգետիկ համակարգին կմիանա «Կապուտակ» 110 կՎ օդային գծի մոտակա

խարսխային հենարանին՝ 110 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծով: Նախատեսվում է 2 հատ 6,3 ՄՎԱ 110/0,8/0,8 տրանսֆորմատորներով մեկ ենթակայանի կառուցում՝ 1200 քառ. մ չափերով: Ենթակայանը կտեղադրվի թիվ 35 հողամասում:

Նախատեսվում է մոտ 1.02 կմ երկարությամբ 110 կՎ լարման օդային գծի կառուցում: Օդային գծի անցկացման համար կօգտագործվի 8 հատ մետաղական հենարան՝ միջինը 200 մ միմյանցից հեռավորությամբ, 4 հատ խարսխային, 5 հատ միջանկյալ: Օդային գծի բարձրությունը ճանապարհների հատման հատվածներում կլինի 10 մ և ավելի բարձրության:

Ստորգետնյա խրամուղիների երկարությունը կկազմի մոտ 2327 մ՝ 0,9 խորությամբ /միջինում 1.215 միջին լայնությամբ/: Մալուխի անցկացումը խրամուղով կկատարվի համաձայն «Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման» տեխնիկական կանոնակարգի և «A5-92» տիպային նախագծի: Նախատեսվում է կայանի և ենթակայանի ընդհանուր հողանցման ցանցի իրականացում:

Հաշվի առնելով անդրադարձման և երկերեսության գործակիցը, ինչպես նաև կորուստները՝ կայանի առաջին տարվա ընթացքում էլեկտրաէներգիայի կանխատեսվող արտադրությունը կլինի ≈16,500 ՄՎտժ:

Կայանի տարածքի պարագծով նախատեսված է արտաքին լուսավորություն և տեսահսկում արտաքին տեղադրման տեսախցիկներով:

Տարածքում իրականացվելու է օպերատորական շինություն (30մ^2)՝ ներքին հարդարումով: Տեղադրվելու են անվտանգության համակարգեր:

Արևակայանի տարածքն ամբողջությամբ կցանկապատվի 2.0 մ բարձրությամբ և ընդհանուր մոտ 1400 գծմ երկարությամբ մետաղական ցանկապատով՝ նախատեսելով մեքենաների 2 դարպասային մուտք (գլխավոր և օժանդակ):

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են հողային և շինարարական աշխատանքներ: Այդ նպատակով օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ:

Հենասյուների հիմքերի ամրացման և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտական կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիայի հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյուների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից: Հաղորդալարերը լինելու են պողպատ-ալյումինե:

Նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր,

Կայանի կառուցման շինարարության և շահագործման փուլերում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված են կլինեն՝

- կայանի և ՕԳ շինարարական աշխատանքների ընթացքում օդային ավազան արտանետումների,
- ջրային և հողային ռեսուրսների օգտագործման,
- լանդշաֆտի, կենդանական և բուսական աշխարհի փոփոխությունների,
- շինարարական թափոնների, կայանի աշխատանքի ընթացքում և ապամոնտաժումից հետո առաջացող թափոնների կառավարման,
- արտակարգ իրավիճակների առաջացման, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Արևային կայանի կառուցման՝ շինարարության փուլում կատարվելու են հողի գրունտի քանդման աշխատանքներ՝ մեխանիզմներով և ձեռքով, կառուցման ժամանակ կատարվելու են արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի, հորատանցքերի,

տրանսֆորմատորի և յուղընդունիչի տեղադրման, մալուխային խրամուղիների կառուցման, ցանկապատի հենասյուների, մետաղացանցերի անցկացման համար հողային աշխատանքներ:

Գործունեության իրականացման համար կատարվելու են 4416 մ³ ծավալի հողային աշխատանքներ, որից՝ 1465 մ³ բուսահող է: Հողային զանգվածն կառաջանա արևակայանի՝ 3043 մ³ և 1370 մ³ տրանսֆորմատորային ենթակայանի կառուցման, ՕԳ-ի հորատանցքերի փորման արդյունքում: Հանվող 2951 մ³ հողային գրունտը կօգտագործվի հետլիցքի, տեղում հարթեցման, իսկ 1465 մ³ բուսահողը՝ բարեկարգման նպատակով: Հողային ռեսուրսները աղտոտումից պահպանելու նպատակով, հաշվետվության համաձայն, նախատեսված են բնապահպանական մի շարք միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատողների խմելու և կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ 22երով՝ ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Շինարարության փուլում՝ գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան արտանետումները կլինեն ծխագազերի տեսքով՝ ավտոտրանսպորտի և շինարարական տեխնիկայի շահագործումից, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, բեռնման, բեռնաթափման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Արևային կայանի համար նախատեսված տարածքը 863,9 մ հեռու է ամենամոտ բնակելի տարածքից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կայանի շահագործման ընթացքում աղտոտումը գործնականում զրոյական է, օդային ավազանի աղտոտման մակարդակը կարելի է գնահատել նշված ցուցանիշներից շատ ցածր: Ազդեցությունները կանխատեսվում են միայն շինարարության ընթացքում ավտոմեքենաների աշխատանքից, ինչը կկրի կարճաժամկետ և ժամանակավոր բնույթ:

Շինարարության փուլում օդային ավազան արտնետումները նվազեցնելու նպատակով նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Գործունեության իրականացման հետևանքով ջրային ռեսուրսների աղտոտում չի կատարվելու, քանի որ տարածքում մակերևութային ջրահոսքերը բացակայում են: Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում մակերևութային ջրային հոսքերի բացակայությամբ պայմանավորված՝ արևային կայանի շինարարական և հետագա շահագործման փուլերում մակերևութային և գրունտային ջրերի բաշխվածության փոփոխություն չի լինելու, ուստի արևակայանի շինարարության և շահագործման ընթացքում կբացակայեն ազդեցությունները ջրային ռեսուրսների վրա:

Շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրերի հեռացման համար կտեղադրվի շարժական բիոզուգարան՝ լվացարանով: Բիոզուգարանի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Գնահատման հաշվետվության համաձայն՝ գործունեության իրականացման հետևանքով կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում: Կենդանական աշխարհի ներկայացուցիչները համեմատաբար պակաս ազդեցության կենթարկվեն՝ պայմանավորված կենդանիների շարժունակությամբ: Շինարարության ընթացքում տեխնիկական միջոցների աղմուկի մակարդակի ավելացման պատճառով հնարավոր է որոշ տեսակների այդ տարածքներից հեռացում, սակայն դա կունենա ժամանակավոր բնույթ, հետագայում հնարավոր է վերադառնան իրենց նախկին տարածքները:

02543163
ՓՈՐՁԱՐՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարության փուլում կառաջանան թափոններ՝ շինաղբի և կենցաղային աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով:

- մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ սև մետաղի (ծածկագիր՝ 3513110001004)՝ 400կգ, ալյումինե(ծածկագիր՝ 3531010501995)՝ 350կգ և պղնձե (ծածկագիր՝ 3531030501013)՝ 140կգ թափոնների տեսքով:
- յուղոտված լաթեր՝ (4-րդ 5820060001014)՝ 2 մ^3,
- շինարարական նյութերի մնացորդներ, քանդման ընթացքում առաջացած շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 9120060101004)՝ 30 մ^3 ծավալով,
- կենցաղային աղբ՝ (ծածկագիր՝ 9120040001004)՝ 4200 կգ/տարի քանակով:

Թափոնների ճիշտ կառավարման և վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա նվազագույնի հասցնելու նպատակով՝ հաշվետվությունում նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Արևակայանի և տրանսֆորմատորային ենթակայանի շահագործման ընթացքում՝ հնարավոր վթարների կամ ենթակայանի վերանորոգման ժամանակ կառաջանան վտանգավոր թափոններ.

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր՝ (3-րդ դաս՝ 5410020702033)՝ 15,6 տ/տարի քանակով: Թափոնի առաջացման հնարավոր քանակը պայմանավորված է տրանսֆորմատորներում յուղերի քանակությամբ,
- յուղոտված լաթեր՝ (4-րդ 5820060001014)՝ 0,5 մ^3 քանակով,
- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ (4-րդ դաս՝ 314012000100 4)՝ 15մ^3 քանակով,
- յուղերով աղտոտված ավազ (կոշտ՝ յուղի պարունակությունը 15%-ից ավել (4-րդ դաս՝ 31402303 01 03 4)՝ 12մ^3,
- քիչ քանակությամբ մալուխների, հաղորդալարերի մնացորդների թափոններ՝ սև մետաղի (ծածկագիր՝ 3513110001004)՝ 10 կգ, ալյումինե (ծածկագիր՝ 3531010501995)՝ 10 կգ և պղնձե (ծածկագիր՝ 3531030501013)՝ 6 կգ քանակներով:

Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով հաշվետվությամբ նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են համապատասխան բաժիններում:

Ենթակայանի տարածքում հնարավոր վթարների կամ վերանորոգման ժամանակ հողային ռեսուրսների մեջ տրանսֆորմատորային յուղի հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով նախատեսվում է՝

- 2 հատ յուղընդունիչի (հոր)՝ կառուցում տրանսֆորմատորներից յուղի հեռացման նպատակով: Յուղընդունիչները կլինեն մետաղական՝ խճաքարի և մետաղական էլեմենտների համակցությամբ,
- հնարավոր վթարների դեպքում յուղընդունիչում հավաքված յուղի, յուղոտված լաթերի և յուղային նյութեր պարունակող այլ մասերի հեռացում և հանձնում համապատասխան վերամշակող կազմակերպություններին,
- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերի հավաքում համապատասխան տարրաների մեջ և հանձնում մասնագիտացված վերամշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- հնարավոր արտահոսքերի դեպքում spill kit կոչված ներծծիչ կտորների կիրառում, որոնք հնարավորություն են տալիս արագ ներծծելու յուղային զանգվածը,
- ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդների հանձնում ասֆալտապատող ընկերություններին,
- յուղերով աղտոտված ավազի հանձնում մասնագիտացված ընկերություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- սև և գունավոր մետաղի ջարդոնի հանձնում մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կապված կլինեն արևային կայանի, ենթակայանի և ՕԳ-ի անվտանգ շահագործման, ջրային ռեսուրսների օգտագործման, հողային ռեսուրսների հնարավոր էրոզիայի և աղտոտման, կենսաբազմազանության փոփոխությունների, ինչպես նաև թափոնների առաջացման հետ:

Հաշվետվության համաձայն՝ շահագործման փուլում օդային ավազանի, ջրային ռեսուրսների հնարավոր ազդեցություն չի կանխատեսվում, հողային ռեսուրսների վրա հնարավոր էական ազդեցություն ևս չի կանխատեսվում:

Արևակայանի շահագործման ընթացքում կառաջանան վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք կկուտակվեն տարածքում՝ փակ պահեստային շենքում՝ մետաղական վագոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը:

Արևային կայանի ներկրված պանելներն ունեն 10 տարվա օգտագործման երաշխիք, համաձայն որի, շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ կվերադարձվեն արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի Հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակում չի նախատեսվում: Աղբը կկուտակվի պոլիէթելենային պարկերի մեջ և ամեն օր կտեղափոխվի աշխատողների կողմից:

Շրջակա միջավայրի վրա թափոնների ազդեցությունը մեղմելու նպատակով հաշվետվությամբ նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ:

Գործունեության վայրը չի առնչվում վայրի բնության կամ այլ արգելոցի, ազգային զբոսայգու կամ միջազգային նշանակության այլ տարածքների հետ, ուստի որևէ ազդեցություն չի կանխատեսվում:

Շահագործման փուլում՝ արևային էլեկտրակայանի կառուցման արդյունքում, տարածքի մի մասը կծածկվի արևային մոդուլներով և կստվերվի հողի զգալի մասը, կստվերեն զբաղեցված տարածքի 25-30 տոկոսը: Մասնակիորեն լուսավորված տարածքներում կստեղծվի բուսական նոր համակեցություն, որի կազմում տեղ կգտնեն տեղաբնիկ ստվերասեր բույսերը, որոնք մինչև այդ հնարավոր է, որ տարածքներում չեն աճել, որոշակիորեն կպահպանվի նաև բուսատեսակների առկա տեսակային կազմը:

Արևային մոդուլներով զբաղեցված տարածքում կստեղծվի նոր էկոհամակարգ, որը ժամանակի ընթացքում աստիճանաբար կկայունանա:

Տարածքում շինանյութերի և վառելիքի պահեստավորում չի նախատեսվում: Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Ընդհանուր տնտեսական վնասը կկազմի 1257,67 ՀՀ դրամ:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր որոնցից են՝

- արևակայանի, ենթակայանի շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում գրունտի խոնավեցում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան: Ջրցանը կիրականացվի ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխում փակ ծածկ ունեցող մեքենաներով, նյութերը տեղափոխող մեքենաների փակում անջրթափանց թաղանթով,
- տարածքում նյութերի պահում ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցների օգտագործում միայն սարքին վիճակում, պարբերաբար ստուգումներ իրականացում,
- հողի բերրի շերտի հանում և պահում,

02543163
ՓՈՐՁԱՓՐՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու միջոցներ՝ ուղղված բուսահողի որակական հատկանիշների վատթարացման բացառմանը,
- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսի մաքրում խոշոր քարերից, թփերից, կոճղերից մաքրում,
- հողի բերրի շերտի օգտահանում, ապարների հեռացում և առանձին պահեստավորում,
- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերի ծածկում խոտաբույսերով կամ այլ միջոցառումների իրականացում՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն,
- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածի կուտակում տարածքում՝ ծածկվելով անջրթափանց թաղանթով,
- անմիջապես տեղում հողային զանգվածի օգտագործում՝ հետլցման և տարածքի բարեկարգման համար և այլն,
- շինհրապարակում 3 տոննա տարողության պլաստմասե տարայի տեղադրում՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հեռացման և հավաքման նպատակով,
- ճանապարհների ջրցանի իրականացում տարվա չոր եղանակներին՝ ըստ անհրաժեշտության,
- շինհրապարակում տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումից առաջացած արտադրական հոսքաջրերի ուղղորդում տարածքում տեղադրված բիոզուգարան և այլն:

Գնահատման հաշվետվության համաձայն՝ շինարարական աշխատանքների կատարման ընթացքում և շահագործման փուլում հնարավոր են արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ դրանք նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ: Նախատեսվում են նաև բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են աղմուկի և թրթռմանը, մարդու առողջության և աշխատանքի կազմակերպմանը, անվտանգությանը, կենսբազմազանության և լանդշաֆտի բարեկարգմանը, որոնք նկարագրված են հաշվետվությունում:

Տարածքում այլ արտադրություններ չկան: Գոյություն ունեցող արևային կայանի հետ որևէ գումարային ազդեցություններ չկան:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կիրականացվի տարածքի բարեկարգում՝ տարածքի մաքրում ավելորդ թափոններից՝ տարածքը բերելով հնարավորինս նախկին տեսքի, շինարարական սարքավորումների ապամոնտաժում և հեռացում տարածքից, գործունեության ենթակա տարածքի հարթեցում, բարեկարգման աշխատանքներ, օդային գծերի հենասյունների տեղադրում՝ 2 մ շառավղից դուրս տարածքներում և հարակից տարածքներում, կանաչ ցանքսի կատարում խոտի տեսքով՝ խախտված կանաչապատ տարածքի վերականգնման նպատակով և այլն:

Արևային կայանի կառուցման համար նախատեսվող ներդրման արժեքը կկազմի 2,916 մլդ ամերիկյան դոլար:

Արևային ֆոտոէլեկտրական կայանի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

- շինարարական նյութերի անվտանգության հսկողություն՝ շինարարական նյութերի ներկրման ընթացքում,
- շինարարական նյութերի և թափոնների տեղափոխում՝ չպլանավորված ստուգումներ օրվա բոլոր ժամերին,
- հողի աղտոտումը կանխելու նպատակով մշտադիտարկում՝ շաբաթը մեկ անգամ,
- օդի աղտոտումը կանխելու նպատակով փոշու, ծուխի մշտադիտարկում՝ ամեն օր,
- աղմուկի մակարդակի տատանումների մշտադիտարկում՝ շաբաթը մեկ անգամ,
- շինարարական և կենցաղային աղբի հեռացում տարածքից, աշխատողների անվտանգության և առողջության ստուգում, պատմամշակութային հուշարձանների մշտադիտարումներ շինարարության ընթացքում,

- տարածքի բարեկարգման աշխատանքների մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ,
- կենսաբազմազանության ապրելավայրերի և աճելավայրերի փոփոխությունների վերաբերյալ հսկողություն՝ տարին մեկ անգամ:

Մթնոլորտային օդում, ջրային ռեսուրսներում վնասակար նյութերի պարունակությունը վերահսկելու, ինչպես նաև թափոնների կառավարումը ճիշտ կազմակերպելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկումներ)՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված: Այդ նպատակով նախատեսվում է մի շարք միջոցառումներ՝ մոնիթորինգի (մշտադիտարկում) պլան (շինարարության և շահագործման փուլեր), որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժնում և աղյուսակում:

Արևային կայանի կառուցման համար նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը ներառված են կայանի շինարարության և շահագործման ծախսերում: Նախատեսվում է բնապահպանական միջոցառումների կիրառման և մոնիթորինգի իրականացման համար տրամադրել տարեկան 300 000 ՀՀ դրամ:

Պարզառաբանական մաս. Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում տարածքում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 110/0,8/0,8ԿՎ ուժային տրանսֆորմատորներով ենթակայանի և դրա սնման համար 110ԿՎ օդային գծի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Գեղարքունիքի մարզի Շողակն բնակավայրում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Մասնակիցների կողմից կարևորվել է նախատեսվող աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, տեղական ինքնակառավարման մարմիններից, որոնց կողմից ներկայացված կարծիքներն ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

2. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված ՀՀ-ում գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարումը:

3. Շինարարության ընթացքում և ավարտից հետո որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝

- սահմանազատել և ժամանակավոր ցանկապատել շինարարական հրապարակը, անցկացնել լուսավորություն և տեղադրել հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,
- վերականգնել և կրկնակի օգտագործել վթարված մասերը,
- ֆոտոէլեմենտներ պարունակող պանելները չթաղել կամ չհավաքել աղբավայրերում բաց վիճակում,
- թափոնների կուտակումը կամ պահումը իրականացնել բնակելի տարածքներից դուրս,
- թափոնները վաճառել թափոնների հավաքմամբ զբաղվող այլ կազմակերպությունների՝ ներառյալ արտասահմանյան զարգացած երկրների, որոնք ունեն նման ժամկետանց արևային թափոնների վերամշակման տեխնոլոգիաներ,
- թափոնները հանձնել այն երկրների կազմակերպություններին, որոնք զբաղված են արևային պանելների արտադրությամբ և որոնցից ձեռք են բերվել ֆոտոէլեկտրոնային արևային պանելները,
- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնները հեռացնել մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով և տարածքում բացառել թափոնների բաց այրումը,
- ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը,
- իրականացնել նախատեսվող սոցիալական ծրագրերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրում արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 110/0,8/0,8ԿՎ ուժային տրանսֆորմատորներով ենթակայանի և դրա սնման համար 110ԿՎ օդային գծի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Նելլի Նասիբյան